ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13.10.2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչության ԲՀԱ բաժնի ԲՀԱ ղեկավարման բաժանմունքի ավագ սպա, մայոր Ա. Օհանյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Դառես» ՍՊԸ-ի (կոնսորցիում Լեգիոն ՍՊԸ) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ապրանքնի անունը, տեխնիկական բնութագիրը առկա են: Ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի պահանջներին, բացի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագրից: Մասնավորապես՝ ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագրի և հաշիվ ապրանքագրերի գումարը և քանակը չեն համապատասխանում մեկը մյուսին (ընդհանուր գումարը ճիշտ է): Պայմանագրի Հավելված N 1-ում քանակը նշված է 800 հատ, միավորի գինը՝ 10000, իսկ հաշիվ ապրանքագրում քանակը նշված է 1000 հատ, միավորի գինը՝ 8000:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը նիստը՝ 13.10.2017թ., մեկ օրով կասեցրել է և մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Մասնակիցը սահմանված ժամկետում՝ ներկայացրել է պահանջված շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող:

1.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 17.10.2017թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Դառես» ՍՊԸ-ի (կոնսորցիում Լեգիոն ՍՊԸ) որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող	Վ. Գասպարյան
Գնահատող	Ա. Օհանյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Գ. Ուխտյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան

17.10.2017թ.